**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը՝ Բանակի օրվա կապակցությամբ**

Թանկագի՛ն հայրենակիցներ, պարոնա՛յք սպաներ, հարգելի՛ զինվորներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Բանակի օրվա կապակցությամբ: Հայոց բանակը բոլորիս հպարտությունն ու պարծանքն է, մեր ժողովրդի տասնամյակների մաքառումների մեծագույն ձեռքբերումը:

Մեր պատմության մեջ չի եղել տևական խաղաղ ու անվտանգ ժամանակաշրջան. մենք միշտ էլ պայքարել ենք մեր պետության ու անկախության, մեր ժողովրդի նվիրական արժեքների պահպանության ու սերունդներին ժառանգելու համար:

Հայոց փառապանծ բանակն անցել է ծանր կորուստների ու փառավոր հաղթանակների ուղի, կարողացել արժանապատվորեն պաշտպանել մեր անկախությունն ու ազատությունը և այսօր էլ անսասան է պահում հայրենի երկրի սահմանները: Այդ անցած ուղին, մեծ հաշվով, մեր սերնդի ու մեր երկրի նորագույն պատմությունն է:

Այսօր՝ մեր հաղթական բանակի ստեղծման 24-րդ տարեդարձի օրը, մեկ անգամ ևս գլուխ խոնարհենք մեր նորօրյա ազատագրական պայքարում նահատակված հայորդիների հիշատակի առջև, հիշենք, նրանց, ովքեր կազմակերպեցին Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանությունը:

Խոնարհումի ու երախտագիտության խոսք եմ ուզում հղել այսօր մեր երկրի անվտանգությունն ու սահմանների պաշտպանությունն ապահովող հայ զինվորներին և բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց անմնացորդ նվիրումով նպաստում են հայոց բանակի հզորացմանը:

Սիրելի՛ հայրենակիցներ, Սյունիքը մեր բանակի կայացման ու մեր հաղթանակների կերտման գործում անգերագնահատելի դերակատարություն է ունեցել, ուստի, ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում խաղաղություն, քաջառողջություն, իսկ մեր բանակի սպայական կազմին ու զինվորներին՝ դժվարին ու պատվաբեր ծառայության իրականացման ընթացքում՝ հավատ, անկոտրում կամք ու վճռականություն և մեծագույն հաջողություններ:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**



**Ս. Խաչատրյան**

27 հունվարի 2016թ.